



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնումների պլանի ձեւը, դրա լրացման, հաստատման եւ հրապարակման կարգը հաստատելու մասին ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Որոշման հավելված 1-ով և հավելված 2-ով հաստատվել են համապատասխանաբար պետական բյուջեի միջոցների հաշվին և այլ միջոցների հաշվին իրականացվելիք գնումների պլանի ձևերը: Սահմանված չէ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի և կենտրոնացված կարգով իրականացվելիք գնումների պլանի ձևերը:

Առաջարկում ենք սահմանել գնումների պլանի մեկ միասնական ձև, որը ներկայացված է սույն առաջարկության հավելված 1-ով և դրա լրացման համար անհրաժեշտ միասնական թվային ծածկագրման համակարգի ներդրման մոդելը Հավելված 2-ով:

2. Որոշման հավելված 3-ով հաստատված է գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգը (այսուհետ՝ Կարգ): Կարգի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն *1-ին և 2-րդ սյունակներում լրացվում է գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան:*

Գործնականում կան դեպքեր երբ անվանացանկում կոնկրետ կողմ բացակայում է և անհրաժեշտ է նշել ավելի ընդհանրական՝ բարձր մակարդակի կողմ կամ գնման առարկան հնարավոր է նկարագրել մի քանի կողմի միջոցով:

Առաջարկում ենք սահմանել հնարավորինս մանրամասն նկարագիր պարունակող կողմի կիրառում այսինքն հնարավորինս ցածր մակարդակի կողմ ավելի քիչ զրոներով վերջում, իսկ բացակայության դեպքում նոր ավելի բարձր մակարդակի կողմի կիրառում, այսինքն ավելի շատ զրոներ վերջում:

3. Կարգի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն *3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինը անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է:*



Ապրանք, աշխատանք և ծառայություն բառերի, ինչպես նաև 2-րդ մակարդակ և խումբ հասկացությունների միաժամանակյա կիրառումը խիստ շփոթություն են առաջացնում, արդյունքում հստակ չէ թե որն է գնման գինը: Անվանացանկի 1-ին մակարդակը (կողի առաջին երկու թվերը) ցույց են տալիս գնման առարկայի բաժինը, որով արդեն իսկ հստակ բաժանում է կատարվում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության պատկանելությանը: Անվանացանկի 2-րդ մակարդակը (կողի առաջին երեք թվերը) հանդիսանում է գնման առարկայի խումբը, որը ներառված է համապատասխան բաժնում և պարունակում է ավելի մանրամասն նկարագիր արտահայտող դասեր (կողի առաջին չորս թվերը):

Առաջարկում ենք հստակ սահմանել «գնման գին» հասկացությունը: Ըստ Կարգի նախագծի՝ այնքան էլ պարզ չի, թե դա համապատասխան բաժնում ներառված խմբերի հանրագումարն է (այսինքն՝ համապատասխան բաժնի ընդհանուր արժեքը), թե համապատասխան խմբում ներառված դասերի հանրագումարն է (այսինքն՝ համապատասխան խմբի ընդհանուր արժեքը):

4. Կարգի 4-րդ մասի համաձայն՝ *պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների պլանը հաստատվում է մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը, բացառությամբ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի:*

Առաջարկում ենք.

1. սահմանել մինչև յուրաքանչյուր եռամսյակին նախորդող վերջին աշխատանքային օրը գնումների պլանի եռամսյակային կտրվածքով հաստատման պահանջ, հաճախակի լրացումներից, փոփոխություններից ինչպես նաև տարվա առաջին երկու եռամսյակում գնումների մեծ մասը կենտրոնացնելուց խուսափելու նպատակով:

2. սահմանել գնումների պլանի հետ միասին առանձին հավելվածով գնումների պլանում համապատասխան տողին հղում կատարելով փոփոխությունների և լրացումների ինչպես նաև միևնույն չափաբաժնում տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաների խմբավորման, միևնույն բնութագիրը ունեցող առարկաների տարբեր չափաբաժինների բաժանման, միևնույն բնութագիրն ունեցող առարկաների տարբեր ընթացակարգերով ներկայացման, ինչպես նաև գնումների բազային միավորը գերազանցող և մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի ընտրության հիմնավորում ներկայացնելու պահանջ և հիմնավորման նպատակով պահանջվող փաստաթղթերի ցանկ:



3. սահմանել գնումների պլանի տարբեր դաշտերի լրացման պատասխանատուներ՝ գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, պատվիրատուի ֆինանսական ծառայություն:
5. Կարգի 9-րդ մասի համաձայն՝ *գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխություններ և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:*

Առաջարկում ենք տվյալ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ սահմանելով տեղեկագրում հրապարակվող գնումների պլանի փաստաթղթի ձևաչափի նկատմամբ միասնական պարտադիր պահանջ:

«Գնումների պլանը՝ բացառությամբ պետական գաղտնիք պարունակող և կենտրոնացված կարգով իրականացվող գնումների, ներառյալ դրանում կատարված փոփոխություններ և լրացումները, ինչպես նաև Հավելվածով ներկայացվող փոփոխությունների, լրացումների և սույն Կարգի 4-րդ կետով նախատեսված հիմնավորումների հետ միասին հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով՝ համակարգչով կարդացվելիք (machine-readable) ֆորմատով, արգելվում է արտատպված տեղեկատվության արտացոլումը:

Պետական գաղտնիք պարունակող գնումների պլանը՝ ներառյալ դրանում կատարված փոփոխություններ և լրացումները, ինչպես նաև Հավելվածով ներկայացվող փոփոխությունների, լրացումների և սույն Կարգի 4-րդ կետով նախատեսված հիմնավորումների հետ միասին հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների պահպանմամբ ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Կենտրոնացված կարգով իրականացվող գնումները չեն ներառվում պատվիրատուի գնումների պլանում:»



Առաջարկում ենք տվյալ կարգով սահմանել կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգը:

6. Որոշման հավելված 4-ով սահմանվում է գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կառուցվածքը:
Գնումների միասնական անվանացանկը (գնումների ընդհանուր բառարանը) դա Եվրոմիության կողմից ընդունված և միջազգայնորեն ճանաչված և բազմաթիվ երկրների կողմից կիրառվող դասակարգիչ է, (common procurement vocabulary), որի վերջին տարբերակը (CPV 2008 թ.) տեղադրված է Եվրոմիության պաշտոնական կայքում՝ <http://simap.europa.eu> և կիրառության մեջ է սկսած 17/09/2008թ-ից: Այն պաշտոնապես թարգմանված է Եվրոմիության 24 լեզուներով, բացի այդ կան այլ լեզուներով թարգմանություններ, օրինակ՝ ռուսերեն, այն պաշտոնապես այլ երկրների կողմից ընդունելու արդյունքում:

Առանց CPV դասակարգչի անհնար է պատկերացնել էլեկտրոնային գնումների համակարգը: Հայաստանի կողմից այն պաշտոնապես չի ընդունվել, սակայն ներկայումս հայաստանում կիրառության մեջ է դրա փոփոխված տարբերակը, որը պարբերաբար շարունակում է ենթարկվել փոփոխությունների: Սույն որոշման տրամաբանությունից բխում է, որ գործող պրակտիկան շարունակվելու է, այսինքն որոշմամբ սահմանվում է անվանացանկի կառուցվածքը (առաջին մակարդակը) իսկ բացվածքի (հաջորդ մակարդակների) սահմանումը վերապահվում է ՀՀ ֆինանսների նախարարի կողմից սահմանմանը: Դա պայմանավորված է կողերը ձևափոխելու լրացնելու ճկուն հնարավորությամբ, ինչը կարծում ենք անթույլատրելի է:

Ներկայումս կիրառվող անվանացանկը զգալի շեղվել է բնօրինակից, մասնավորապես ներմուծվել են մեծ քանակությամբ դեղագործական արտադրանքի անվանումներ, փոփոխվել են կողեր, ավելացվել է գնում չհանդիսացող ծախսերի բաժին, ինչը գնումների պլանում արտացոլելու կարիք չկա և արդյունքում առաջացել են անհամապատասխանություններ ARMEPS համակարգում կիրառվող կողերի և ընդունված անվանացանկի միջև: Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու հետ կապված անհրաժեշտություն է առաջացել անվանացանկը թարգմանել ռուսերեն: Բացակայում է լրացուցիչ բառարանը:

Առաջարկում ենք սույն որոշմամբ պաշտոնապես ընդունել Եվրոմիության (EC) № 213/2008 կանոնակարգի դրույթներին համապատասխան ընդունված և միջազգային ճանաչում ունեցող ստանդարտ CPV



դասակարգիչը, որի ամբողջական հայերեն տարբերակը սահմանել հավելված 4-ով: Դասակարգչում միակողմանի փոփոխությունները բացառել, փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել Եվրամիության համապատասխան մարմին: Դեղագործական արտադրանքի մանրամասն նկարագրությունները սահմանել լրացուցիչ բառարանով:

7. Որոշման 2-րդ մասը առաջարկում ենք լրացնել և հաստատել հետևյալ բովանդակությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից քսանօրյա ժամկետում հաստատել Գնումների միասնական անվանացանկի կիրառման մեթոդական ուղեցույցը և սույն որոշմամբ սահմանված իրավական այլ ակտերը:»



Հավելված 1

Կցվում է Excel Ֆայլով

Հավելված 2

Գնումների պլանի, կազմակերպվող ընթացակարգերի և շնորհվող պայմանագրերի միասնական թվային ծածկագրման համակարգի ներդրման մոդել

1.«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն *պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:*

Բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգումը հաստատված է ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2007թ-ի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանաի հավելված N23-ով:

Նշված հավելվածը վերանայման և թարմացման կարիք ունի, բացի այդ առաջարկում ենք տվյալ հավելվածում ներառել Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն պատվիրատու հանդիսացող բոլոր կազմակերպությունները՝ դրանց շնորհելով անհատական ծածկագիր:

Տվյալ ծածկագրի հիմքով առաջարկում ենք ներդնել, թվային ծածկագրի վրա հիմնված գնումների պլանին և դեռևս պլանավորման փուլում ընթացակարգերին և հետագայում կնքվող պայամանագրերին ևս ծածկագրի շնորհման կարգ:

Առաջարկվող ծածկագրի կառուցվածքը

YY-Q-CCCCC-XXX-W-Z-NNN-n

որտեղ՝

YY-ընթացիկ տարի՝ 17

Q- եռամսյակ

1-առաջին եռամսյակ

2-երկրորդ եռամսյակ

3-երրորդ եռամսյակ



4-չորրորդ եռամսյակ

CCCCC–պատվիրատուի անհատական ծածկագիրը ըստ գերատեսչական դասակարգման, օրինակ՝

101001-ՀՀ Նախագահի աշխատակազմ

XX-հրապարակային, կենտրոնացված, կամ պետական գաղտնիք պարունակող գնումների պլան՝

01- հրապարակային գնումների պլան

02- կենտրոնացված գնումների պլան

03- պետական գաղտնիք պարունակող գնումների պլան

X-միջոցների պատկանելությունը՝

1-պետական բյուջեի միջոցներ

2-այլ միջոցներ

3-պետական բյուջեի և այլ միջոցներ

W-գնման առարկայի դասակարգումը ըստ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների՝

1-Ապրանքներ

2-Աշխատանքներ

3-Ծառայություններ

Z- գնման ձևի ծածկագիրն է՝

1-բաց մրցույթ

2-Էլեկտրոնային աճուրդ

3-գնանշման հարցում

4-մեկ անձից գնում

5-փակ նպատակային մրցույթ

6-փակ պարբերական մրցույթ

NNN-ընթացակարգի հերթական համարն է՝ 001, 002, 003...

n- ընթացակարգի շրջանակներում շնորհվող պայմանագրի հերթական համարն է՝ 1, 2, 3...

Ծածկագրման համակարգի միջոցով կազմված գնումների պլանի ծածկագիրը կունենա հետևյալ տեսքը՝

171-101001-01

ընթացակարգի ծածկագիրը կունենա հետևյալ տեսքը՝

171-101001-011-3-1-001

Կարդալով այս ծածկագիրը հասկանում ենք 2017 թվականի առաջին եռամսյակում ՀՀ Նախագահի աշխատակազմի կարիքների համար պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող հրապարակային բաց մրցույթով ծառայությունների ձեռքբերման ընթացակարգ, որի արդյունքում շնորհված պայմանագրի ծածկագիրը կունենա հետևյալ տեսքը՝

171-101001-011-3-1-001-1



Ծածկագրման միասնական համակարգի ներդրումը հնարավորություն կտա գնումների տեղեկագիրը հետագայում վերածել հիերարխիկ կառուցվածքով գնումների ռեգիստրի, որտեղ ծածկագրի հիման վրա կհավաքագրվի ընթացակարգի հետ կապված հրապարակվող ողջ տեղեկատվությունը՝ հետագծային սկզբունքով, որը կուժեղացնի գնումների նկատմամբ նախնական հսկողությունը, իսկ տեղեկատվության թափանցիկությունը և մատչելիությունը կապահովի հանրության կողմից գնումների նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև չի առաջանա ընթացակարգերի և շնորհված պայմանագրերի ծածկագրերը հայերենից այլ լեզուներով թարգմանելու անհրաժեշտություն:

Ներդնելով միասնական ծածկագրման համակարգ և կիրառելով այն դեռևս պլանավորման փուլում, ընթացակարգին կշնորհվի ծածկագիր դեռ գնումների պլանում և կարտացույցվեն մեկ ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվող գնման առարկաները, որի շնորհիվ նախնական հսկողություն կսահմանվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջների կատարման նկատմամբ:

Եռամսյակի ընթացքում ընթացակարգը ամբողջությամբ կամ որևէ չափաբաժնի մասով չկայանալու և վերահայտարարվելու դեպքում առաջարկվող մոդելում օգտագործվում է միևնույն ծածկագիրը՝ կատարելով «վերահայտարարված» նշումը, հաջորդող եռամսյակներում հայտարարվելու դեպքում ծածկագրում փոխվում է եռամսյակի ծածկագիրը, իսկ գնման ձևը փոխվելու դեպքում՝ գնման ձևի ծածկագիրը՝ պահպանելով ընթացակարգի հերթական համարը տարվա կտրվածքով:

2. Բյուջետային գործառնական դասակարգումը առաջարկվող մոդելում կիրառվում է ոչ թե ամբողջ պլանի համար, այլ յուրաքանչյուր չափաբաժնի, ընդ որում միևնույն չափաբաժնի համար մի քանի ծրագիր նշելու հնարավորությամբ:

Այսպիսի լուծումը կբացառի տարբեր ծրագրերով միևնույն բնութագիրը ունեցող առարկաները տարբեր ընթացակարգերով ձեռքբերումը, ինչը բխում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներից, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն